600.0442.27.11.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2019 թվականի №442Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի №432Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 13-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները և հաշվի առնելով Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի 2019 թվականի նոյեմբերի 12-ի №CoE/LO(2019)0104 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի «Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակին ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №432Ա որոշմամբ Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակին տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման №1073 թույլտվության գործողության ժամկետը՝ որոշման 1-ին կետում և 2-րդ կետով հաստատված ռադիոհաճախականությունների օգտագործման №1073 թույլտվության պայմանների 3-րդ կետում «մինչև 2019 թվականի դեկտեմբերի 4-ը» բառերը փոխարինելով «մինչև 2020 թվականի դեկտեմբերի 4-ը» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի դեկտեմբերի 4-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ս. ԱՂԻՆՅԱՆ

ք. Երևան
27 նոյեմբերի 2019թ.